Մրցույթ՝ «Երևանի Գևորգ Վարդանյանի անվան հ.192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Պատմություն» (18 դասաժամ՝ որից 5-ը ռուսերենով), «Գերմաներեն» (14 դասաժամ), «Կերպարվեստ» (10 դասաժամ), «Քիմիա» (ռուսերենով ուսուցմամբ դասարաններ՝ 1 դասաժամ), «Կենսաբանություն» (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ 2 դասաժամ), «Ֆիզիկա» (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ 2 դասաժամ), «Հայոց եկեղեցու պատմություն» (13 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են հրապարակման օրվանից՝ 2023թ. փետրվարի 15-ից մինչև փետրվարի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:
Մրցույթը տեղի կունենա **2023թ. մարտի 3-ին՝ ժամը 14:30-ին**, Երևանի հ.192 հիմնական դպրոցում, հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս: Տեղեկությունների համար զանգահարել (010) 36-98-80 հեռախոսահամարով: